

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԸՆԴՂԱՅՆՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Տիգրան ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՊՏՀ Միջազգային տնտեսական
հարաբերությունների ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. համաշխարհային արտահանում, ներմուծում, առևտրի
ազատության համաթիվ, տնտեսական ազատության համաթիվ

Ազատ առևտրային հարաբերություններ ձևավորելու գլխավոր փաստարկներից մեկն արտաքին առևտրի ծավալների զգալի ընդլայնման հնարավորությունն է. տնտեսագետների զգալի մասը, թերևս, համոզված է, որ արտահանման և ներմուծման ուղղությամբ նշանակալի հաջողություններ կարող են գրանցվել հիմնականում ազատական առևտրային քաղաքականության կողմնակից երկրներում, քանզի ազատ առևտրի նկատմամբ խոչընդոտների սահմանափակումը լուրջ նախադրյալ է երկրի արտահանման ներուժի իրացման համար: Փաստարկի ճշմարտացիությունը կարելի պարզել՝ ուսումնասիրելով աշխարհի առաջատար արտահանողների և ներմուծողների առևտրի ազատության ցուցանիշները:

Հարյուրամյակների ընթացքում տնտեսագետների միջև շարունակվում են վեճերն այն մասին, թե տնտեսական աճի ապահովման տեսանկյունից արտաքին առևտրային քաղաքականության որ ուղղությունն է առավել արդյունավետ: Եթե հովանավորչությունը հնարավորություն է տալիս զարգացնել ազգային տնտեսությունը, ստեղծել նպաստավոր պայմաններ ներքին արտադրողներին օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու համար, ապա ազատ առևտուրը թույլ է տալիս արտադրության ծախքերը համեմատել միջազգային ծախքերի հետ՝ ստեղծելով համաշխարհային մրցունակ ապրանքներ:

Արտաքին առևտրում հովանավորչության կան ազատ առևտրի ծայրահեղ տարբերակների ընտրությունը հատուկ էր նախորդ դարաշրջանին, մեր օրերում այդ երկու մոտեցումները փոխկապված են և միահյուսված:

Արտաքին առևտրային քաղաքականության ամենասկզբունքային տարբերությունը զարգացած և զարգացող երկրների միջև, հավանաբար, կայանում է նրանում, որ վերջիններիս մոտ այն ուղղված է առաջին հերթին ազգային արդյունաբերության խթանմանը¹: Հետևաբար, զարգացող երկրները

¹ Кругман П. Р., Обстфельд М., Международная экономика. Теория и политика, ЮНИТИ, 1997, с. 254

իրենց արտաքին առևտրային քաղաքականությունը կառուցում են արդյունաբերական քաղաքականության հիմքի վրա: Սակայն այս մոտեցումը հիմնականում բնորոշ է ոչ հետևողական բարեփոխումներ իրականացնող երկրներին²: Արդյունաբերական քաղաքականությունը որոշ դեպքերում կարող է և դրական արդյունքներ տալ, հատկապես արտահանման ոչ ավանդական ճյուղերի և տեխնիկական բարդ արտադրանքի դեպքում, որտեղ մեծածավալ ներդրումներ են պահանջվում արտադրության կազմակերպման և միջազգային շուկաներում արտադրանքի առաջխաղացման համար:

Գոյություն ունի արդյունաբերական քաղաքականության երկու տեսակ՝ ներմուծման փոխարինման և արտահանման խթանման: Եթե առաջին տարբերակի դեպքում նախապատվությունը տրվում է թույլ և աննրջունակ ճյուղերին, ապա երկրորդի դեպքում, հակառակը, խթանվում են ուժեղ և նրջունակ ճյուղերը: Արտահանման ուղղված արդյունաբերական քաղաքականության դեպքում կառավարությունը երկրի զարգացումը տանում է այն ուղղությամբ, որով շարժվում է համաշխարհային շուկան, ներմուծման փոխարինման դեպքում՝ շարժվում է շուկայի հակառակ ուղղությամբ³:

Առևտրի ազատության և տնտեսական զարգացման միջև կապը հիմք հանդիսացավ տնտեսական ազատության ցուցանիշի հաշվարկման համար: Wall Street Journal-ի և Heritage Foundation-ի 2015 թվականի հրապարակման համաձայն՝ Հայաստանը 186 երկրների շարքում տնտեսական ազատության մակարդակով գրավել է 52-րդ տեղը 67,1 գնահատականով (տե՛ս Աղյուսակ 1.): Հայաստանի տնտեսական ազատության համաթիվը նախորդ տարվա համեմատ կրճատվել է 1,8 կետով՝ հիմնականում պայմանավորված սեփականության իրավունքների, աշխատանքի ազատության և հարկաբյուջետային ազատության ցուցանիշների կտրուկ անկմամբ: Այդուհանդերձ, տնտեսական ազատության ցուցանիշով Հայաստանը 23-րդն է Եվրոպական տարածաշրջանի 43 երկրների շարքում, և իր գնահատականով գերազանցում է աշխարհի և տարածաշրջանի միջին ցուցանիշները:

² Գրիգորյան Կ., Արտահանման խթանման միջազգային փորձը, Տնտեսական քաղաքականություն աղբատություն ամսագիր, 2006, էջ14:

³ Попов В., Стратегии экономического развития, М., 2011, с.160.

Աղյուսակ 1. ՀՀ “Տնտեսական ազատության համաթջվը” 2015թ.⁴

Երկրի թիվը	186
Երկրի դիմքը	52
“Տնտեսական ազատության գոմթությունը”	67
Սեփականության իրավունքը	20
Կոռուպցիայի ազատությունը	36
Հարկաբյուջեի ազատությունը	84
Կառավարության ծախսերը	82
Գործարարության ազատությունը	82
Աշխատանքի ազատությունը	64
Ազատության իրավունքը	70
Առևտրի ազատությունը	85
Ներդրումների ազատությունը	75
Ֆինանսական ազատությունը	70

Առևտրի ազատության ցուցանիշը որոշվում է ապրանքների ներմուծման նկատմամբ երկրում կիրառվող առավելագույն, նվազագույն և միջին կշռված մաքսատուրքերի, ինչպես նաև ոչ սակագնային սահմանափակումների հիման վրա: Ըստ Heritage Foundation-ի փորձագետների՝ առևտրի ծավալները միջին կշռված մաքսատուրքը Հայաստանում կազմում է 2.3 տոկոս, սակայն ոչ սակագնային խոչընդոտները և ոչ արդյունավետ մաքսային վարչարարությունը մեծացնում են առևտրի ծախսերը:


Երկրները դասակարգվել են հետևյալ կերպ.

- 80-ից ավել՝ “ազատ”
- 70-79.9՝ “հիմնականում ազատ”
- 60.0-69.9՝ “չափավոր ազատ”

⁴ <http://www.heritage.org/index/country/armenia>

- 50.0-59.9”հիմնականում ոչ ազատ”
- 49.9-ից ցածր՝ “ճնշված”

Ըստ Heritage Foundation-ի դասակարգման՝ վերջին տասը տարիներին Հայաստանը համարվել է տնտեսապես “չափավոր ազատ” երկիր: Տնտեսական ազատությունը գնահատվել է՝ ելնելով տասը ցուցանիշներից, և առևտրի ազատությունը դրանցից մեկն է: Վերջինս ավելի բարձր է Հայաստանում, քան տնտեսական ազատության մակարդակը (տե՛ս Գծապատկեր 1.):



Գծապատկեր 1.1. ՀՀ առևտրի ազատության և տնտեսական ազատության ցուցանիշների դինամիկան՝ ըստ Heritage Foundation-ի⁵

⁵ <http://www.heritage.org/index/explore?view=by-region-country-year>

Փաստորեն, առևտրի ազատության ցուցանիշով Հայաստանը մտնում է առաջին խմբի մեջ: Սակայն, առևտրի ազատությանցուցանիշը ամենևին էլ չի խոսում երկրի արտահանման և ներմուծման ծավալների ավելացման կամ նվազման մասին, եթե իհարկե խոսքը չի գնում արտահանման և ներմուծման համաշխարհային առաջատարների մասին (տե՛ս Աղյուսակ 2.):

Աղյուսակ 2. Ապրանքների համաշխարհային արտահանման և ներմուծման առաջատարները 2013 թվականին (մլրդ ԱՄՆ դոլար,%)⁶

	Երկրները	Արտահանում մլրդ ԱՄՆ դոլար	Տեսակարար կշիռը	Ներմուծում մլրդ ԱՄՆ դոլար	Տեսակարար կշիռը
1	Չինաստան	2209	11,7	1950	10,3
2	Միացյալ Նահանգներ	1580	8,4	2329	12,3
3	Գերմանիա	1453	7,7	1189	6,3
4	Ճապոնիա	715	3,8	833	4,4
5	Նիդերլանդներ	672	3,6	590	3,1
6	Ֆրանսիա	580	3,1	681	3,6
7	Կորեայի Հանրապետություն	560	3,0	516	2,7
8	Միացյալ Թագավորություն	542	2,9	655	3,5
9	Հոնկոնգ, Չինաստան	536	2,8	622	3,3
10	Ռուսաստան	523	2,8	343	1,8
	Ամբողջ աշխարհը	18816	100	18890	100

⁶ WORLD TRADE REPORT 2014, p.32

Զինաստանը, Միացյալ Նահանգները և Գերմանիան, կազմելով առաջատար եռյակը համաշխարհային արտահանման և ներմուծման կառուցվածքում, ստացել են առևտրի ազատության հետևյալ գնահատականները՝ 71.8, 87 և 88⁷: Հատկանշական է, որ առևտրի ազատության ավելի բարձր համաթվերով աչքի են ընկնում մի շարք երկրներ, օրինակ՝ Մավրիկիոս, Մակաու, Լիխտենշտեյն, Կանադա, որոնք զգալի կշիռ չունեն համաշխարհային արտահանման և ներմուծման կառուցվածքներում: Պատկերը կտրուկ փոխվում է, երբ համեմատության մեջ է դրվում Հայաստանը՝ առևտրի ազատության ցուցանիշով 48-րդը աշխարհում, գնահատականը՝ 85,4, վերջին տարիներին Հայաստանի մասնաբաժինը համաշխարհային արտահանման մեջ կազմել է ընդամենը 0,01%, իսկ համաշխարհային ներմուծման մեջ՝ 0,02%⁸:

Ստացվում է, որ առևտրի ազատությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է արտահանման ընդլայնման համար, ուստի, համաշխարհային արտահանման և ներմուծման կառուցվածքում շոշափելի մասնաբաժին ունեալու համար բացի առևտրի ազատության բարձր ցուցանիշներից, երկրները պետք է բավարարեն այնպիսի պայմանների, ինչպիսիք են՝ որակյալ և համաշխարհային շուկայում մրցունակ ապրանք թողարկելու կարողությունը, արտահանման ենթակառուցվածքների առկայությունը և այլն:

⁷ <http://www.heritage.org/index/explore>

⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, Երևան, ՀՀ ԱՎԾ, էջ 580:

Տիգրան ԱՅՎԱԶՅԱՆ

Արտաքին առևտրի ազատականացումը որպես արտահանման ընդլայնման նախադրյալ

Բանալի բառեր. համաշխարհային արտահանում, ներմուծում, առևտրի ազատության համաթիվ, տնտեսական ազատության համաթիվ:

Արտահանման և ներմուծման նշանակալի ծավալները սովորաբար պայմանավորվում են երկրի վարած ազատ առևտրի քաղաքականությամբ, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առավել ազատ առևտրի քաղաքականություն որդեգրած երկրները ոչ միշտ են զբաղեցնում համաշխարհային արտահանողների և ներմուծողների առաջատարի դերը: Ուստի, պետք է ենթադրել, որ առևտրի ազատությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է արտահանման ընդլայնման համար: Վերջինս կարելի է դիտարկել որպես արտահանման ընդլայնման նախադրյալ:

Тигран АЙВАЗЯН

ЛИБЕРАЛИЗАЦИЯ ВНЕШНЕЙ ТОРГОВЛИ – ПРЕДПОСЫЛКА ДЛЯ РАСШИРЕНИЯ ЭКСПОРТА

Ключевые слова: мировой экспорт, импорт, индекс свободы торговли, индекс экономической свободы

Значительные объемы экспорта и импорта обычно обосновываются свободно-торговой политикой страны, но исследования показывают, что страны принявшие политику свободной торговли не всегда имеют ведущую роль в рейтинге мировых экспортеров и импортеров. Таким образом, следует предположить, что свобода торговли являются необходимым, но не достаточным условием для расширения экспорта. Последнее может рассматриваться в качестве предварительного условия для расширения экспорта.

Tigran AYVAZYAN

FOREIGN TRADE LIBERTALIZATION AS PRECONDITION FOR EXPORT EXPANSION

Keywords: world export, import, index of free trade, Index of Economic Freedom

Significant volumes of exports and imports are usually substantiated by free-trade policies of the country, but studies show that countries adopted a free trade policy do not always have a leading role in the ranking of the world's exporters and importers. Thus, it should be assumed that free trade is a necessary but not sufficient condition for the expansion of exports. The latter can be seen as a precondition for the expansion of exports.